ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ-ԳՄԼՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏ

գ.Լճափ «09» սեպտեմբերի 2021թ.
ժամը 13:00-ին

Մասնակցում էին
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հ.Հովսեփյան /նախագահ/,
Լ.Շահբազյան, Տ.Հովսեփյան
Քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան

ՀՀ-ԳՄԼՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգ

1) Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վրում;
2) Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում;
3) Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում;
4) Հանձնաժողովի հանջորդ նիստի օրվա, ժամի եւ վայրի մասին որոշման ընդունում;

1) Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վրում;

Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի եւ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, եւ հայտերի բացման նիստին ներկա լիազորված ներկայացուցիչները լիազորված չէին գների նվազեցման շուրջ բանացկություններ վարելու իրավասությամբ, ուստի գնահատողի քարտուղարը 2021 թվականի սեպտեմբերի 03-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել էր բոլոր մասնակիցներին՝ 09/09/2021 թվականին ժամը 13:00-ին գների նվազեցման շուրջ կազմակերպվող միժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միժամանակյա բանակցություններին մասնակցում էր «Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ-ն: Բանակցությունների արդյունքում մանակիցները չվերանայեցին իրենց գնային առաջարկները, արդյունքում՝ մասնակիցների վերջնական գնային առաջարկները հետեւյալն է /ստորեւ ներկայացվում է, վերանայված գնային առաջարկները կցվում է/:

N	Մասնակցի անվանումը	Աշխատանքի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	2	3	4	5	6
1	«Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ	Լճափ համայնքի 3-րդ և 4-րդ փողոցների լուսավորության ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաղթղերի կազմման խորհրդատվական աշխատանքների ծեռքբերում	170 000	--	170 000
2	«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ		280 000	--	280 000
3	«Արեւ Էներջի» ՍՊԸ		700 000	140 000	840 000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում;

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝ որպես բավարար գնահատված եւ նվազագույն գնային առաջարկ ներակայացրած մանակից՝ գնահատող հանձանժովողը որոշեց.

«Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում;

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավել մասնակից՝ հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչեւ 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Հանձնաժողովի հանջորդ նիստի օրվա, ժամի եւ վայրի մասին որոշման ընդունում

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 13:00-ին, ՀՀ Գեղարքունքի մարզ, գ.Լճափ, Ազատամարտիկների փողոց 27 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

Տ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ